

*ԲՈՒՀԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՐՅՈՒՅԹԻՅ ԴՈՒՐՍ ԲՈՒՀԵՐ  
ԱՐՏՈՆՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎՈՂ ԱՆՁԱՆՅ ՑԱՆԿԸ, ՆՐԱՆՅ ԿՈՂՄԻՅ ԲՈՒՀԵՐԻ  
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԸ ԼՐԱՅՆԵԼԻՄ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ  
ՑԱՆԿԸ*

*2. Ընդունելության քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում  
Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին  
մրցույթից դուրս բուհ են ընդունվում՝*

- 1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված (մահացած)  
զինծառայողների երեխաները,*
- 2) Ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս  
հաշմանդամ դարձած քաղաքացիները:*

*Դիմորդները բուհերի ընդունելության դիմում-հայտի հետ միասին ներկայացնում են  
հետևյալ փաստաթղթերը՝*

- Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի  
Հանրապետության ոստիկանության և Հայաստանի Հանրապետության ազգային  
անվտանգության ծառայության տված տեղեկանքները,*
- անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, նույնականացման քարտ, զինվորական  
գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, Հայաստանի Հանրապետության  
հատուկ անձնագիր, կացության վկայական), որտեղ նշված լինի Հայաստանի  
Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայող ծնողի  
անունը.*
- ծննդյան վկայականը, որտեղ նշված են ծնողների անունները,*
- լուսանկարով տեղեկանք ավարտական դասարանում սովորելու մասին՝ հաստատված  
դպրոցի տնօրենի կողմից (նախորդ տարիների շրջանավարտները ներկայացնում են  
ավարտական փաստաթուղթ՝ ատեստատ կամ դիպլոմ),*
- 6 լուսանկար (3 x 4 սմ չափսի),*
  
- Ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս  
հաշմանդամ դարձած քաղաքացիները ներկայացնում են անձը հաստատող փաստաթուղթ,  
6 լուսանկար (3 x 4 սմ չափսի), ավարտական փաստաթուղթ՝ ատեստատ կամ դիպլոմ,  
հաշմանդամության փաստաթուղթը:*